

ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան

08.06.2023թ.
 Ժամը 11:30

Հանձնաժողովի նախագահ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
Անդամներ՝

Ա. Պապիկյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնական

Թ. Կարապետյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատու

Ա. Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ

Ն. Մկրտչյան

1. Տեղեկություն www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում հայտերի բացման վերաբերյալ

1.1 «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերը էլեկտրոնային աճուրդի www.eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են 2023 թվականի հունիսի 05-ին ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդը տեղի է ունեցել հունիսի 06-ին ժամը 11:00-ին:

1.2 ԷԱՃ մրցույթի շրջանակներում հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները /անվանումը, հեռախոսը և էլ. փոստի հասցեն/:

N	Մասնակցի անվանում	էլ. հասցե	հեռախոսահամար
1	«Տեխնոֆորում» ՍՊԸ	info@technoforum.am	+374 91 009 610
2	«Լեդարմ» ՍՊԸ	-	033058800
3	«Գ. Գ. Է. հոլդինգ» ՍՊԸ	GGEHOLDING@yandex.ru	077666566
4	«Միկրորինգ» ՍՊԸ	microring@arminco.com	+374 10 529421

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

2. «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին

2.1 «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն համաձայն հավելված N 1-ի
- Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը
- Իրական շահառուների մասին հայտարարագիրը հավելված N 1.3-ի,
- Գնային առաջարկ՝ www.eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում:

2.2 «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի և «Միկրոռինգ» ՍՊԸ-ի կողմից www.eauction.armeps.am համակարգի ներկայացրած հայտերը համակարգի կողմից անցողիկ են, ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի՝ հավելված 1-ում (դիմում հայտարարության մեջ) առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջների նկատմամբ՝ նշված չէ իրեն փոխկապակցված անձանց ընթացակարգին մասնակցության իրավունքների պահանջների բավարարման մասին:

2.3 «Լեդարմ» ՍՊԸ-ի և «Գ. Գ. Է. հոլդինգ» ՍՊԸ-ի կարգավիճակները համակարգում մերժվել են՝ 1-ին չափաբաժնի գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու, իսկ «Գ. Գ. Է. հոլդինգ» ՍՊԸ-ն նաև 2-րդ չափաբաժնի գնային առաջարկի նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

2.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, ծանուցել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին, որպեսզի շտկի նշված անհամապատասխանությունը:

2.5 «Տեխնոֆորում» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է բացակայող հավելվածը:

2.6 «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի և «Միկրոռինգ» ՍՊԸ-ի հայտերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, և գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

3.1 Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակիցների գնային առաջարկներն հետևյալն են.

Զ/Բ	Ապրանքի անվանումը	Նախահաշվային գին / ՀՀ դրամ/	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ, /ՀՀ դրամ		Վերջնական առաջարկ/ ՀՀ դրամ		Մասնակցի կարգավիճակը
				Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին	Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին	
1	Համակարգիչ ամբողջը մեկում	1 240 000	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	1190000	1428000	1029600	1 235 520	

			«Լեդարմ» ՍՊԸ	1040000	1248000	1040000	1 248 000	մերժված
			«Գ. Գ. Է. հոլդինգ» ՍՊԸ	50000000	60000000	50000000	60 000 000	մերժված
2	Գումաւոր տախիչներ	471 940	«Միկրորինգ» ՍՊԸ	392500	471000	239000	286 800	
			«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	300000	360000	276000	331 200	
			«Գ. Գ. Է. հոլդինգ» ՍՊԸ	50000000	60000000	50000000	60 000 000	մերժված

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

5. «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Գնման հանձնաժողովը որոշեց.

5.1 Հաղթող մասնակիցներ ճանաչել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով, և «Միկրորինգ» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով:

5.2 Հաստատել «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման առարկայի գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ և որակավորման ապահովում գնման առարկայի գնման գնի 15 (տասը) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝ Ա. Պապիկյան

Անդամներ՝ Թ. Կարապետյան

Ա. Մարգարյան

Քարտուղար՝ Ն. Մկրտչյան